


Ամբաս Բիւրաս
հմբագրութիւն «Փիիհնիկ»ի
Աղեփասնդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Ղր.՝

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է



ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Յր.՝

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6



ՓԻԻԿՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՌՔԷ ԿԸ ԾԱՆՈՒԻ ՀԱՏԸ ՄԷԿ ՂՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ


ՇԱԲԱԹ 5 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 21

ՋԱՐԴԵՐՆ 'Ի ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ԱՊԱԳԱՅ ՀԱՐՅԱՊԵՂՈՒՄ ՄԸ



Մեր ընթերցողներուն ուսադրու-
թիւնը լարուած պահելու համար դէպ
'ի քաղաքական բարձրութիւն, որ վերջերս
սկսաւ 'ի նպաստ Հայկ. Հարցին, ահա՛
կը հրասարակեմք այս անգամ Լր. Բրդի
Մարտի 20 Սեպտ. ի թուականով
«Ջարդերն 'ի Հայաստան եւ ապագայ
հարցապնդում մը» վերնագրով խմբա-
գրականը:

Մ. Դրնի Կօչէն, Սենի երեսփո-
խանը, վերջերս Բարիզի մեր պաշտօնա-
կիցներուն մէկուն ուղղած է նամակ
մը, որուն մէջ կը յայտնէ իր մտադրու-
թիւնը հարցապնդելու, վերամուտին,
արտաքին գործերուն նախարարը, Հա-
յկերուն ստեղծուած կաշտութեան ու
տեղի ունեցած դէպքերու մասին, 'ի

Մուշ ու Սասուն. վայրեր ուր սկսան 6
տարի առաջ, Հայաստանի շարդերը:

Մ. Դրնի Կօչէն կը փութայ ա-
ւելցնել թէ՛ անցեալ տարի այսպիսի
ոճիրներու սպառնալից վերագարձն
արդիւուած էր պատեհաւիթ ու ազդու
միջոցներով և թէ՛ ինք պիտի չ'մոռ-
նայ յիշելու զանի հարցապնդումի ըն-
թացքին:

Կամ ուրիշ կերպով ըսենք, յար-
գելի երեսփոխանն ընդլայնել կ'ուզէ
պայքարը, խորհելով ո՛չ առանց պատ-
ճառի թէ՛ ֆրանսական կառավարու-
թիւնը Սուլթանին հանդէպ վճռակա-
նութիւն ու անդրդուութիւն գիտէ
ցոյց տալ ա՛յն ատեն միայն, երբ խըն-
դիր է կարգադրել գրամական գոր-
ծեր:

Մենք չ'ենք անդիտանար իրա-
ւունքները Կ. Պոլսոյ քարափներու ըն-
կերովթեան, ո՛չ ալ Դրան պահանջա-
տեարցը: Բայց, հաւնելով հանդերձ
մեր դեսպան Մ. Գոնսթանի դիրքին,
մեզի դժուար պիտի ըլլար բոլոր այս

խնդիրները բացարձակօրէն ազգային հանգամանք ունեցող նկատել: Մանաւանդ, ինչպէս որ ըսուեցաւ, սուկական գործեր են ասոնք:

Ու եթէ իրաւ է որ հայկական շարժերը վերսկսելու նախընթաց օրուան մէջ ենք, մեզի կը թուի թէ՛ Թրանսան, այս անգամ գէշ ըրած պիտի ըլլայ, եթէ մոռնայ իշ մարդասիրական ու վեհանձնական աւանդութիւններն ու եթէ ձեռքերը ծալած նստի: Արեւելքի մէջ իր վաստկած օրինաւոր ազդեցութիւնն իբե՛ն իրաւունք կուտայ միջամտելու, նոր նոր կոտորածներ արգիլելու համար, որոնք սրտմտութիւնը կը յարուցանեն լոկ, բոլոր քաղաքակրթեալ ժողովուրդներուն:

Ա՛լ հերիք ու շատ է արդէն որ հայկական վերջին շարժերուն ատեն, Եւրոպան փակուած մնաց անգործութեան ու անտարբերութեան մեջ: Բոլորովին տարբեր շրջանի մը մէջ, մէկ ազազակ միայն պիտի բարձրանար այս անգութ ու բարբարիկ արարքներուն գէժ, ու հաւանական է թէ Օսմ. կառավարութիւնը շուտով պիտի բերուէր զգաստութեան, ազգու գործողութեամբ մը:

Կը հաւատուի թէ, մեր կողմէն, մեր դեսպանը, ոչ այն ատեն Մ. Գամպոնի էր, Եւրոպայի միջամտութիւն մ'առաջարկեց. միջամտութիւն որ արգելուեցաւ, կ'աւելցուի, մեծ տէրութենէ մը:

Այս ամենը կարելի է բայց դարձեալ ա՛լ աւելի հաստատուած կը մնայ թէ՛ հազարաւոր էակներ, կիներ ու տղայք իսկ անգթօրէն փողոտուեցան, առանց մէկու մը կողմէ զո՛հ մը միայն ազատելու համար դոյզն ջանք մը տեսնուելու:

Բայց մենք յօժարամիտ դիտենք — ու Մ. Իրնի կօշէն անիրաւ պիտի ըլլար եթէ մոռնար զանի — թէ՛ Թրանսան, այս

պիտի պարագայի մէջ, չ'կրնար մեկուսի մնալ: Եւ սակայն իրեն պէտք է միւս տէրութեանց հաւանումը: Գեռ կուզենք յուսալ թէ՛ վերջերս տեղի ունեցած դէպքերը որոնք ամօթ մ'են արդի քաղաքակրթութեան համար, ա՛լ չը պիտի կրկնուին:

Միայն, եթէ բոլորովին հակառակը պատահի, կարծենք Թրանսան մեծ շահ չենի, եթէ միջամտութեան մը նախաձեռնութիւնն ունենայ, ինդրելով, օրինակի համար, աջակցութիւնը Նիկոլա կաշսեր, որ մէկ բառով միայն կարող է արգիլել այսքան դժպի՛ դէպքերու վերադարձը:

Արդարեւ, աւելորդ չ'է պնդել թէ՛ մեր երկրին համար անհրաժեշտ է պահպանել որչա՛փ որ կարելի է իր վարկն ու հեղինակութիւնն արեւելեան երկիրներուն մէջ, տրուած ըլլալով որ անդրադարձօրէն, այս վարկն ու հեղինակութիւնն առանց հետեանքի չ'են մնար մահմէտական ժողովրդոց վրայ, որոնք կը բնակին իր ավերիկեան կալուածներուն մէջ:

Ու ստոր համար, ըստ մեզ, բաւական չէ՛ յարգել տալ իր ազգակիցներուն իրաւունքները Կ. Պոլսոյ մէջ: Պարտի, ամեն անգամ որ պարագաները կը պահանջեն, նորէն ձեռք առնել իր վեհանձնական ու քաղաքակրթիչ գերն ու լսեցնել իր ձայնը զըրկուածներուն ՚ի նպատ: Բայց, կը կրկնենք մենք, սխալ մը պիտի ըլլար *sans l'hydropathique* մէջ իյնալ առանձինն ստանձնելով միջամտութիւն մը որ պիտի է այն, որու մասին կը խօսինք հիմայ:

Ճիշդ ատենին կը հաւատուի թէ՛ բարիզաբնակ Հայերու պատուիրակութիւն մը, հախազալով նոր շարժեր, ներկայած են եղեր արտաքին գործերու նախարար Մ. Տէլգատէի ազերսագիր մը, խնդրելով այս վերջինէն, Թրանսայի հիւր Ռուսիոյ կայսրէն

ստանալու խօսք մը, որ, անոնց հասկացողութեամբ «բովանդակ ազգի մը համար փրկութեան խօսքն է եղեր»:

Անվիճելի է թէ՛ այս վարմունքը մեր կառավարութիւնն ու մեր դիւանագիտութիւնը պատուելու բնութիւնն ունի միայն:

Այս պայմաններու մէջ, Մ. Տէլգասէի գեղեցիկ առիթ մը կը ներկայանայ պատասխանելու ծանուցեալ հարցապնդումին. բայց նախարարը՝ Սուլթանին գէմ, (գրամական) գործերու գետնի՞ն վրայ միայն պիտի գիտնայ քիչ մը գործունէութիւն ցոյց տալ:

Ասի՛ ապագան պիտի յայտնէ մեզի:

ՕՐԱՍ ՊԵՐԴԷՆ



ԿՍՐԴԱԼ

ՓՍՐՈՍԻ մէջ

(Թիւ 4, 5, 7,)

Ազգային Սահմանադրութիւնը
և

Աղեփասանդրիոյ Թաղ. Խորհուրդը:

ՔՐՈՆԻԿ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

— ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ կենսագրութիւնը խոստացած էինք հրատարակել, սկսեալ «Փիւնիկ»ի նախընթաց թիւէն. բայց, անմահ հայրենասէր — գրագէտին յիշատակին արժանավայել յարգանք մ'աւելի ընծայած ըլլալու նպատակով, պարտք զգացինք անոր կենսագրութեանը կցել նաև կենդանագիրը, որուն պատրաստութեանը համար պարտաւորուեցանք յետաձգել խոստացուած հրատարակութիւնը որ պիտի երևի «Փիւնիկ»ի 22րդ թիւով:

— ՀՈՒՅԵՐ մռայլուտ տիտղոսը կրող գիրքը ստացանք այս օրերս: Փայլուն ու ազնիւ թղթի վրայ, ճաշակաւոր ու

մաքուր ապագրութեամբ այս գիրքը կը պարունակէ Տիար Վահան Թէքէեանի քերթուածները, ոտանաւոր և արձակ: Թէքէեանի մտքին այս նախախայրիքը գուշակել կուտայ ապագայ նոր իրապաշտ բանաստեղծը, որուն սակայն արձակներն աւելի յաջողած են քան թէ ոտանաւորները. գոնէ մենք այդպէս գտանք: ՀՈՒՅԵՐ ոտանաւորներուն մէջ անհոգ արհամարհանք մը կայ դէպ ի տաղաչափութեան մասնաւոր կանոնները. բնաւ նկատի չեն առնուած ներդաշնակութիւնն ու ձևը, մինչդեռ արձակներուն մէջ կ'զգաս թէ աւելի՛ բանաստեղծական է հեղինակը, ուժեղ առոյգ արտագրութիւններովը:

— ՍՐԲ. ԱՌԱՋՆՈՐԴԸ Խաչվերացի Կիրակի օրը պատարագեց քաղաքիս Պօղոս Պետրոս եկեղեցին ու խօսեցաւ աւուր պատշաճի քարոզ մը, որուն հրատարակութիւնը կը փափագէինք տալ ներկայ թիւով, զրկած չ'ըլլալու համար գոնէ բացականները այսպիսի քարոզէ մը ոչ նշանակութենէ զուրկ չ'էր, մանաւանդ, տեղական-ազգային ծանօթ խնդրին նկատմամբ պարունակած ակնարկութեանց տեսակէտովը: Սակայն, այս շաբթուան եւրոպական թղթաբերով հասած քաղաքական լուրերն այնքան աւելի բարձր ու շահեկան են մեզ համար, որ պարտաւորեցանք յաջորդին թողուլ մեր մամուլի տեսութիւնը, յիշեալ քարոզին վրայ, զոր պիտի յորջորջենք Խաչի ճառը:

— Գահիրէի Գալստեան վարժարանին ի վնասվելը շերտ Հոգաբարձուներուն մէկ քմահաճ կարգադրութեան հետեանքով, հինգ տարիէ ի վեր այնքան աչդիւնաւոր պաշտօնավարութեամբը ծանօթ Սր. Սօֆի Մանիսալեան առժամապէս, — չ'ըսելու համար վերջնապէս — կ'ըստիպուի քաշուիլ պաշտօնէն և իրեն յաջորդ կը կարգուի դարձեալ առժա-

մապէս — թէև մէկ տարուան պայմանա՝
նաժամ կնքուած ըլլալը կը հաւատուի
— Փիւնիկի ընթերցողներուն արդէն
ծանօթ Օր. Մարի Պէյլէրեան:

Պարտք կ'զգանք նախ շնորհաւո՝
րել այս վերջնոյն պաշտօնը, մաղթե՝
լով որ իր նախորդին դէմ լարուած
կարգ մը տխուր հնքորիկներուն ինք ալ
զոհ չ'երթայ:

Չենք կրնար միևնոյն ատեն լուռ
ու անտարբեր մնալ հանդէպ ծիծալելի
կամայականութեանց, որոնց գոհացում
մը տալու տենդով է միայն որ այսօր
Գալստեան վարժարանը կը զրկուի իր
արժանաւոր ու անձնուէր մէկ պաշտօնեայէն: Առ այժմ այսչափ:

— Փարոսը Աղեփսանդրիոյ մեջ. —
Այս վերջին շաբթուան երկու թիւերուն
մէջ մեր պատուական պաշտօնակիցը՝
քաղաքիս մէջ ատենէ մ'իվեր յուզուող
ու հետզհետէ սուր կերպարանք ստա՝
նալու բնութիւն ունեցող ծանօթ տեղա-
կան-ազգային խնդրին նուիրած է
երկու խմբագրականներ, որոնց տողե-
րուն մէջ անկողմնակալ ոգին կը յածի,
և որոնք կը խոստանան յանգիլ եզրա-
կացութեան մը, որ ծառայէ ժողո-
վուրդին իրական շահերուն:

«ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ» ՆԱՄԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Այս նամակին պատմութիւնը գիտեն
անտարակոյս բոլոր անոնք որ
ուշի ուշով կը հետեին պայքարին:

Արդ, եթէ Գեր. Տ. Այվազեան
յամառի խուսափելու դիւրացնելէ լուսաբանող
միջոցներուն գործադրու-
թիւնը. միջոցներ, որոնց առաջինն է՝
առաջարկուած Բնիկ Յանձնախմբի
մը կազմութիւնը, և եթէ լոկ, հինգ
անուններու բերնով շարունակէ իր
կարգ մը խոստովանանքները հրատա-
րակել տալ, այն ատեն Տ. Եդ. Թուր-
չուճեանի կը մնայ հարթ գետնի մը

վրայ բերել դնել հարցը. այս է. վա-
ւերական վիաներով մէկիկ մէկիկ հաս-
տատել Սրբ. Առաջնորդին յատենի
արտասանած խօսքերը, դրաւոր խոս-
տումները, կարծիքներն ու խոստո-
վանութիւնները բառ առ բառ, ու այս-
պէս վերջ մը դնել այնքան դիտակցօ-
րէն գործուած կատակերգութեան մը:

Սակայն, եթէ դարձեալ Սրբ. Առաջնորդը,
բեմէն Դելփեան պատ-
դամներ միայն թափթփելով շատանայ,
ու իրերու ներկայ տխուր կացութիւնը
թողու որ թագաւորէ, պիտի պարտա-
ւորինք, հանրային զգացումին ու
մտածումին թարգման, մամուլի խըս-
տութեամբ որակելու նորին Սրբաշ-
նութեան այս ընթացքը:

ՕՏԱՐ ԴԷՄՔԵՐ

Ժ Ա Ն Ֆ Ի Ն Օ

Փրանսական մամլոյն արդի ամե-
նանշանաւոր դէմքերէն մին է Ժան
Ֆինօ, «Օտար Դէմքեր»ու երկրորդ
նիւթը: Փրանսացի մը չ'է, ո՛չ ալ Անգ-
լիացի մը: Բոլոնիացի մ'է ու, այսօր,
Բարիզի La Revueին խմբագիրը: Գեռ-
գարոցի գրասեղաններուն վրայ՝ իրեն
ունեցած ձիրքը, տաղանդը, ձգտում-
ները՝ իր վարժապետներուն գուշակել
տուին արդէն իր մէջ ապագայ մեծ
մարդը: Կեանքի ասպարէզը՝ առաջին
անգամ՝ փաստաբանութեան դռները
բաց սւ իրեն: Ու հակառակ իր պաշտօնակիցներուն
մէջ տարիքով ամե-
նապզտիկը լինելուն, իր անունն առաջին
տեղը կը դրաւէր ամբողջ Բո-
լոնիոյ դատարաններուն մէջ:

Ժան Ֆինօ իր Օրէնսդէտի տաղան-
դըն երբէք չարաչար չ'է գործածեր.
Իբրև փաստաբան «մերք սեր», մերք
ձեռմակ»ը պաշտպանել չ'էր իր սկըզ-

բունքը: Անհատի մը դատը պաշտպանել գտտարանի մը մէջ՝ պարզ, հասարակ մարդու մը գործ էր: Ժան Փինո առով չ'էր կրնար գոհանալ: Ու իր ձգտումները, *idéale*, առաջնորդեցին զինք՝ ճակատագրապէս՝ օրագրութեան: Այդ ասպարէզին մէջ մտաւ կանուխէն, դեռ շատ երիտասարդ: Գիտէր, կը հասկնար այն գծաւարութիւնները որոնց պիտի հանդիպէր՝ անխուսափելիօրէն՝ օրագրող մը: Ատկէ զատ կը մտնէր Ռուսիոյ այդ կապող կաշկանդող գրաքննութեան քթին տակ՝ բոլորովին անկախ ու ազատ թերթի մը գոյութեան անկարելիութիւնը: Իր երկրին մէջ շատ մը թերթերու աշխատակցեցաւ, բայց *La Revue* խմբագիրը, զգուեցաւ ու գանեցաւ վերջապէս Ռուսական Բոլոնիոյ գրաքննութեան եւ իր Եսթա տարաւ զինք Արեւմուտք, այդ ազատ կեդրոնը:

Ժան Փինո վերջապէս Բարիզ հաստատուեցաւ և գնեց *La Revue des Revues* ֆրանսական մեծ հանդէսը: Լոնտոնի անգլիերէն համանուն հանդէսին հետևողութեամբ էր որ հրատարակեց զայն արդի *La Revue* ին նախկին *Տէր-Տնօրէն*: Իրաւ է թէ միևնոյն յաջողութիւնը չ'ունեցաւ ինչ որ ունեցաւ *Review of Reviews*, բայց սա՝ ֆրանսական հանդէսներուն մէջ ունեցաւ իրեն յատուկ տեղը: *Revue des Deux Mondes* էն զատ, Բարիզեան ոչ մի հանդէս չ'կրցաւ հաւասարիլ, ժողովրդական դառնալ և բաճարանալ այն մակարդակին վրայ, ուր հասաւ բարձրացաւ *La Revue des Revues* ն՝ իր արդի խմբագրին ձեռք անցնելէն անմիջապէս վերջին:

«*La Revue*»ն, սակայն, չ'է այսօր ան, ինչ որ էր *La Revue des Revues* եղած ատեն, նոյն իսկ Ժան Փինոյի անօրէն-խմբագրութեան օրովն ալ: Թէպէտ դարձեալ ֆրանսական ու օտար հանդէսներու առաջնորդող յօդուածները, նշանաւոր գրութիւնները կը խտանան,

կը վերլուծուին անոր մէջ և caricaturesներու ընտիր հաւաքածոյ մը՝ կը պատկերացնէ ամսուան այժմէութիւնը, քաղաքականութիւնը. բայց *La Revue* իր այս օրուան անուան հաւատարիմ է աւելի քան իր նախատիպարին (prototype):

Ասիկա, կարծեմ, ո՛չ մեծ Բոլոնիացիին ո՛չ ալ անոր թերթին արժէքը ո՛ր և է կերպով կը նուազեցնէ: Փրանսական Մամլոյն մէջ *La Revue*ն առաջին գրական հանդէսն է միշտ ու Ժան Փինո շատ մեծ իրաւամբ՝

Peu de mots, pleins d'idées խօսքը դրոշմած է անոր ճակտին:

Անգլիական, Ամերիկեան, Աւստրալիական— *Review of Reviews*ներու քովը, անուանակից, համահաւասար և ֆրանսերէն *Revue des Revues* մ'ալ տեսնելը քաղցրիկ և գրական մեծ հաճոյք մը պիտի պատճառէր ամեն գրասէրի, բայց չ'եմ գիտեր ինչո՛ւ ազահ գտնուեցաւ Ժան Փինո այդ մասին, ինչպէս Սըր-Սթիւա՝ Լոնտոնի *Review of Reviews* խմբագիրը, ցաւելով կ'ըսէր հանդէսին անուան փոփոխութեան առթիւ:

Ժան Փինո ընտիր գրական ակումբ մը բոլորած իր շուրջը, խիստ կանոնաւոր ու լուրջ բովանդակութեամբ մը կը հրատարակէ իր հանդէսը: Երեսուն տարին հաշիւ բոլորած ըլլալ կը թուին: Կորովամիտ ու ընդունակ օրագրող մըն է: *La Revue* խմբագիրը՝ Հայր, հայ գրականութիւնն եւրոպայի ծանօթացնելու գործին մէջ ալ միշտ իր կարևոր դերն ունեցած, և յաճախ հիւրընկալած է հայ գրողներու յօդուածները:

Եւ այս առթիւ աւելորդ չ'եմ համարիր ծանօթացնելու ընթերցողներս Ժան Փինոյի «*Երկարակեցութեան փիլիսոփայութիւնը*» (1) անուն գրքին հետ զոր 1900 ին հրատարակեց և որ այն-

(1) *La Philosophie de Longévité. Par Jean Finot. Librairie Schleiber Frères. Paris.*

չափ մեծ աղմուկ հանեց եւրոպական Մամլոյն մէջ:

Երկարակեցութեան փիլիսոփան կատարեալ լաւատես մ'է իր այս երկին մէջ երկարակեցութեան մասին. իր փիլիսոփայութիւնը՝ դաւանանքն է լաւատեսութեան: Մահուան սարսափն է, կ'ըսէ ժան Ֆինո, որ կը թունաւորէ, կը կարծէ մարդուն կեանքը: Ու ա՛յս է գրեթէ միշտ իր պաշտպանած *thèse*ը:

Վիճակագրութիւններն ու գիտունները, կը յաւելու հեղինակը, ցոյց կուտան թէ՛ մարդը կենդանիներու ամենաերկարակեացն է: Հարիւրը անցընողներ դեռ շատ կան: «Երկարակեցութեան փիլիսոփայութիւնը» գրողը կանանց մասին աւելի լաւատես է: Ծրանայի մէջ, կ'ըսէ, հարիւրամեանիներու թիւը 10ի դէմ 1 է: Ըստ 1895ին կատարուած վիճակագրութեան մը, Սկրվտիոյ և Լոնտոնի երկսեռ հարիւրամեանիներու համեմատութիւնն է 5ի դէմ 16: Ատկէ զատ «սկար սետ» բացատրութիւնը գոյութեան իրաւունք չ'ունի, որովհետեւ կինը՝ համեմատաբար՝ աւելի շատ կենսական տարր ունի իր մէջ քան մարդը: Եւ, կենդանական աշխարհին մէջ, էգերու թիւն անցընելու միակ միջոցը՝ մայրը լաւ կերակրելն է: Ասոր հակառակը, քաղաք մը ո՛րչափ աղքատ ըլլայ, նորա ծընունդներն ա՛յնչափ շատ կ'ըլլան: Բայց եթէ տասը համար է որ, կը յարէ ժան Ֆինո, երկարակեցութիւնն Աստուծոյ կողմէ կնոջ տրուած պարգև մը նկատուած է, կինն ալ՝ ասոր փոխարէն՝ ուրիշ բաներէ՛ գրկուած է, որոնց համար երբէք չ'զադրիր նա Մայր-Բնութիւնը մեղադրելէ:

Հեղինակը, յաջորդաբար, զատ զատ գլուխներու մէջ, կը խօսի երկարակեցութեան միջոցներուն, մեր տարածամ մահուան պատճառներուն, կեանքի շարունակութեան եւ սպազային ծնանելիք մարդոց վրայ, որոնք, կ'եզրակացնէ նա, պիտի ըլլան կապկամարդ ու մարդուկ, Մարդկութեան նախահայրերը:

ՎԱՀԷ

ՇՆԱԿԱՆ ՍՈՒՏ Մ'ԱՂ

Օրուան հրատապ հարցով շահագրգռուողները կը յիշեն թէ Սեպտ. 1ի կիրակի օրը Եկեղեցիին ոստիկանական հսկողութեան ենթարկուելուն առթիւ՝ «Փիւնիկ»ի մէջ երեցան ծանր ակնարկութիւններ Պատ. Թաղ. Խորհրդին և Սրբազան Առաջնորդին դէմ, որոնց կա՛մ ուղղակի հրաւերովը կա՛մ գէթ գիտաքեանքը և հաւանութեանքը միայն կրնային եկած ըլլալ ոստիկանները: Այդ օրէն մինչև այսօր «Փիւնիկ» նոյն կարծիքին վրայ կը մնայ, ըստ որում վերջէն աւնուած տեղեկութիւնները, կարգ մը յայտնութիւններ, օտար մամուլի յայտարարութիւնները և ամէն բանէ վեր՝ Թաղական Խորհրդոյ քարտուղարին... հերքումները կը թուին նոյնը հաստատել:

Հերքումները բնելով կ'ակնարկենք Տ. Մկրտիչեանի «Քստրիստներ» վերնագրով մէկ գրութիւնը («Արշալոյս»), թիւ 210, Սեպտ. 7) որուն մէջ, չենք գիտեր ինչո՞ւ, ազգային իշխանութեան վերագրուած արարք մ'ալ իր վրայ հազնելով կոպիտ բաւերու և փքոցու ույց սպառնալիքներու շարքէ մը վերջ՝ պէտք զգացած էր «բացատրել» Սեպտ. 1ի միջադէպը:

Մենք մինչև այսօր եթէ պատասխան չ'տուինք այդ հերքումին, պատճառը այն էր որ լուրջ և մանրակրկիտ քննութիւն մը բացած էինք Տ. Մկրտիչեանի «քստրիստներ»ուն վրայ և արդիւնքին կը սպասէինք: Այսօր մեր քննութիւնները արդէն աւարտած ըլլալով՝ ի վիճակի ենք տալու մեր ամենաբացորոշ պատասխանը Տ. Մկրտիչեանի այդ տիւր «բացատրութիւններուն»:

Նախ մէջ բերենք այդ պարոնին գրածները.

«Փիւնիկ լրագիրը քանի շաբաթ է ի վեր տեղական ազգային խնդիրներու մասին բուն յօդուածներ կը հրատա-

րակէր, որոց ամփոփումը տեսնուած է վերջերս Գահիրէ հրատարակուող ՆՊԼ անուն արաբերէն թերթին մէջ: Յիճ-ԵԱԼ ԱՐԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԸ իր կողմէն կաւելցնէ թէ ժողովուրդին մէջ յուզում է երկպառակութիւն կայ...: Ոստիկանութիւնը թէ՛ ՅիճԵԱԼ ԱՐԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԷՆ և թէ՛ հրատարակչին ճշտմամբ օտարութիւններէն կենթագրէ թէ իրաւցնէ տեղւոյս հայ հասարակութեան կարեւոր մէկ մասը յուզումի մէջ է և կուզէ իր պարտականութիւնը կատարել՝ հանրային խաղաղութիւնը պահպանելու համար: Եթէ ոստիկանութիւնը դիտցած ըլլար թէ քանի մը անձեր են միայն յանուն ժողովուրդի խօսող և ինքզինքնին իբրև ժողովուրդներկայացնողը՝ ան ատեն տարակոյս չկայ թէ ո՛չ ՆՊԼի գրուածներուն ո՛ր է կարևորութիւն կուտար, ո՛չ ալ սրբաբանի ճշտմամբ օտարութեանց ականջ կը կախէր (1): Խնդիր է թէ ո՞վ ՆՊԼի մէջ Փիլեիկի հրատարակութիւնները համառօտել տուած է: Ինչո՞ւ համար ՆՊԼը միայն Փիլեիկի գրուածները կ'արտատպէ և ո՛չ թէ «Արշալոյս»ինը: ՆՊԼ ո՞ւր կից Հայերէն սորվեցաւ: Ասոր պատասխանն ընթերցողին կը թողունք գուշակելը»:

Բնական է որ Տ. Մկրտիչեանի ա՛յսչափ անսովոր պաղարիւնութեամբ մէջբերած մէկ փաստը — ՆՊԼ լրագրին հրատարակութիւնները — կարելի չէր անուշադիր անցընել, ուստի Փիլեիկի խմբագրութիւնը իրեն առաջին դործ ըրաւ հետամտել ձեռք բերելու ՆՊԼի վերջին համարները, անոնց պարունակութեան տեղեկանալու համար: Ու կը խօստո...

(1) Անցողակի ըսեմ որ սեղական կառավարութիւնը այլեսլաւաւեղեակ է թէ՛ օրէնքն գործադրութիւնը պահանջողները սեղոյս հայ հասարակութեան մէկ կարեւոր մասը կը կազմեն եւ ո՛չ թէ մէկ քանի անձեր են, ինչպէս ուզուած է ներկայացնել...:

Մ. Յ.

վանինք որ հակառակ Տ. Մկրտիչեանի «նկարագրին» նկատմամբ մեր կազմած որոշ դաշտաբան, կարելի չէր իր կողմէ այդքան համարձակ կերպով մատնանիչ եղած թերթի մը դոյութիւնը անգամ տարակոյսի ենթարկել: Ուստի դիմեցինք Գահիրէի մեր մէկ քանի բարեկամներուն, ինքրելով որ ՆՊԼի այդ համարները ձեռք ձգեն և մեզի հասցնեն: Անոնց ամէնուն պատասխանը եղաւ այս. — Հաս փնտռեցինք, ամեն լրագրավաճառի հարցուցինք, խմբագրութիւններու ալ դիմեցինք ու մեզի պատասխանուեցաւ թէ ՆՊԼ ԱՆՈՒՆՈՎ, ԼՐԱԳԻՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ:

Ասոր վրայ ենթագրեալ ՆՊԼ լրագրի խմբագրութեան յաջորդաբար ուղղեցինք պարզ, յանձնարարեալ և կրկնակի յանձնարարեալ նամակներ, որոնց առթիւ նամակատան կողմէ՛ յայտարարուեցաւ թէ ԳՅՀԻՐԷԻ ՄԷՉ ՆՊԼ ԱՆՈՒՆՈՎ ԱՐԱՅԵՐԷՆ ԼՐԱԳԻՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ:

Նոյնպէս 1900 և 1901 տարիներու Indicateur Egyptien ներուն մէջ անձամբ փնտռեցինք եւ հաստատեցինք թէ ՆՊԼ ԱՆՈՒՆՈՎ, ԼՐԱԳԻՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ:

Ժամանակով Գահիրէ հրատարակուող «Courrier du Nil»ի խմբագիր, իսկ այժմ Ալ-Մուայյաս ֆրանսերէն շաբաթաթերթին խմբագիր Տ. Ժ. Միւնիէին դիմեցինք, և նա գրաւոր պատասխանեց թէ «Թէև ՆՊԼ անունով արաբական թերթ մը ժամանակաւ կայ եղեր, բայց վաղուց ԳՅԻՐԱՅԷ և ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼԷ»:

Աղեքսանդրիայ զանազան օտար լրագրիներու անօրէնութիւններն ալ նոյն յայտարարութիւնը ըրին: Էլ-Պաւիլ թերթի խմբագրութիւնը յայտարարեց նաև թէ Ո՛Չ ՄԻԱՅՆ ՆՊԼ ԹԵՐԹԸ՛ ԱՅԼ ԱՆՈՐ ՏԷՐ — ԽՄԲԱԳԻՐԷ ԱԼ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼԷ ՎԱՂՈՒՅ ԳՅԻՐԱՅԷ (մեռած է):

Ի վերջոյ, Աղեքսանդրիոյ կառավարչատունն ալ, ուր յատկապէս դիմում եղաւ այս մասին, յայտարարեց թէ ՆՊԼ ԱՆՈՒՆՈՎ, ԱՐԱՅԵՐԷՆ

Թերթ ՄԸ Ի ՆԵՐԿԱՅԻՍ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ:

Ուստի, այս ամեն հաստատումներու վրայ հիմնուած, մենք ալ այսօր հրապարակաւ կը յայտարարենք թէ՛ նիւ ԱՆՈՒՆՈՎ ԼՐԱԳԻՐ ՄԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ, բայց միայն Տ. Մկրտիչեանի սուտերու խոչոր տոպրակին մէջ:

Հետեւաբար.

Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ, երբ կը յայտարարէ թէ նիւ անունով թերթ մը կ'ըլլայ Գահիրէի մէջ:

Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ երբ կըսէ թէ նիւ թերթին մէջ տեսնուած է «Փիւնիկ»ի բուռն յօդուածներուն մէկ ամբողջութիւնը:

Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ երբ կըսէ թէ՛ նիւ աշաբերէն թերթը իր կողմէն կաւելցնէ թէ ժողովուրդին մէջ յուզում եւ երկպառակութիւն կայ»:

Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻ երբ կը յայտարարէ թէ ոստիկանութիւնը նիւ թերթի հրատարակութիւններէն կենթադրէ թէ հայ հասարակութեան մէկ կարեւոր մասը յուզումի մէջ է:

Նաև կը յայտարարենք.

Հաւատարիմ իր յօդուածի «ՔՍՈՒԹԻՒՆՆԵՐ» վերնագրին՝ Տ. Մկրտիչեան ՔՍՈՒԹԻՒՆ կընէ երբ կը հարցնէ. «Խնդիր է թէ ո՞վ նիւի մէջ Փիւնիկի հրատարակութիւնները համառօտել տուած է»:

Տ. Մկրտիչեան ՔՍՈՒԹԻՒՆ կընէ երբ կը հարցնէ. «Խնջո՞ւ համար նիւի միայն Փիւնիկի գրուածները կարտատրպէ և ո՛չ թէ Արշալոյս»ինը:

Տ. Մկրտիչեան ՔՍՈՒԹԻՒՆ կընէ երբ կը հարցնէ. «Նիւ ո՞ւրկէց հայերէն սորվեցաւ: Ասոր պատասխանը ընթերցողին կը թողունք գուշակելը»:

Տ. Մկրտիչեան ՔՍՈՒԹԵԱՆ գազաթնակէտը կը հասնի երբ կըսէ. «Եթէ ոստիկաններու ներկայութիւնը անյնքան անախորժ է ձեզի (ՄԻԱՅՆ ՄԵԶԻ), ԱՐԱՔԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒ ՄԷՉ ԶԱՓԱԶԱՆՅՈՒԱԾ ՍՈՒՏԵՐ ԳԼՏՈՐԵԼԷ ՀՐԱԺԱՐԵՅԷՔ»:


Այսչափ շնական պաղարիւնութեամբ խօսուած սուտերու եւ այսչափ անպատկառ հրապարակ նետուած քսու.

թիւներու հեղինակին մենք ի՞նչ անուն պէտք է որ տանք. մենք ալ անոր պատասխանը ընթերցողին կը րոյտնէ գուշակելը:

Ու այս անձն է որ, ինչպէս ուրիշ առիթներով, այս առիթու ալ Պատ. Թաղ. Խորհրդին պաշտպանութիւնը կըստանձնէ ու զայն կարգադրացնէ (*) հետեւալ կերպով.

«Երբ վսեմ. Կարապետ պէյ Բէիլեան իմացաւ դաղտնի ոստիկանութեան ներկայութիւնը՝ յանձնադարեց ինձ թէլէֆօնով թէ ոստիկանութեան պէտք չունինք»: Իրաւ է որ պէտք ունենալ կարծոյնէն իսկ ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆ ԲԱԽԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԾ ԷԻՆ, այն ալ ժողովրդին մէջ նստեցու հաւատ, բայց այս կէտին վրայ ծանրանալը ներկայ յօդուածի նպատակէն դուրս է, ինչպէս նաև մեզ նպատակէն դուրս է պրպտել թէ՛ ի՞նչ պատճառ կար դիմելու վսեմ. Կարապետ պէյին, որ բացակայ էր, մինչդեռ Սրբ. Սուալնորդը անձամբ ներկայ էր. միթէ՛ ն. Սրբաշնութիւնը ինքը չէ՞ր կրնար և պէտք չէ՞ր անմիջապէս ընել այդ յայտարարութիւնը ոստիկաններուն:


Աւելի չենք երկարեր: Փիւնիկի էջերուն մէջ այսառաջին անգամը չէ՛ որ կը նշաւակուին Տ. Մկրտիչեանի հրապարակային սուտիստութիւնները. դիմակը պատուուած է. ժողովուրդը դիտէ զգուշանալ և չխաբուիլ այսպիսիներէ. կը մնայ սակաւաթիւ ուրիշներուն ըլլալ այսուհետև աւելի աչալուրջ ու բանաւոր:



ԾԱՆՈՒՅՈՒՄ

«Փիւնիկ»ի Պատ. ընթերցողները պիտի կարգան ներկայ թիւին մէջ ուսումնասիրեն վիպասան Կոնս Լեոն Դօշարոյի «Երբեք պիտի չ'սպաննեմ» վերնագրով Ռեթօրմի մէջ երկցած ընդարձակ նամակին թարգմանութիւնը, զոր հրատարակել խոստացած էինք նախընթաց թիւով:

ԱՆՊԱՏԿԱՌ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ
ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ



«Մշտական Ատենապետ» անունին բացատրութիւնը՝ ըստ վերնոյն՝ թէ՛ Պատ. Թաղ. Խորհուրդէն և թէ՛ Սրբ. Առաջնորդէն տարբեր կերպով մը տալէ վերջ՝ Տ. Մկրտիչեան կ'անցնի խնդրոյ առարկայ հատուածի երկրորդ կէտին բացատրութեանը: Այդ կէտն է «Վսեմ. Փաշայի կողմէ կարգուած Թաղ. Խորհուրդ»: Ինչպէս արդէն ըսինք, այս նախագասութեան իմաստը յայտնի է և բացատրութիւն չի վերցնեք. արդարև ընթերցողը քաջ կը տեսնէ թէ այդ յայտարարութեամբ Խորհուրդը բացէ ի բաց կը խոստովանի որ իր անբողոքութեամբ կարգուած է Վսեմ. Փաշայի կողմէ եւ ո՛չ թէ իր այս կամայն անդամը միայն. արդէն Վսեմ. Փաշան ինքն ալ զանազան առիթներով ամենաբացորոշ եւ անվրիպելի կերպով յայտարարած է թէ արդի Թաղ. Խորհուրդը ինք կազմած է բացառիկ պարագաներու բերմամբ եւ առժամեայ հանգամանքով: Բայց Տ. Մկրտիչեան արևու պէս յայտնի, պաշտօնապէս հաստատուած ու յայտարարուած այս ճշմարտութիւնը չուզեր ընդունիլ. ինչո՞ւ. — որովհետև անգամ մը ինք եղելութիւնը տարբեր կերպով ներկայացուցած, խեղաթիւրած է (իր առաջին յօդուածով). հիմա ասին ջանք կը թափէ իր թ. քածը չ'իզելու. . . Այս յուսահատ դրութենէն ազատելու համար է որ կը դիմէ իմաստակութեան: Ստիպուած ենք նմուշներ մէջ բերել իր ինստասկ պատճառաբանութիւններէն՝ տեղի չը տալու համար ո եւ է կասկածի թէ յանիրաւի «Անպասկառ ինստասկութեան գըռնի գործոց» յորջորջած ըլլանք իր երկրորդ յօդուածը:

Վերոգրեալ «Վսեմ. Փաշայի կողմէ կարգուած Թաղ. Խորհուրդ» նախագասութեան իբր մեկնութիւն՝ Տ. Մկրտիչեան կըսէ.

«Այդ նամակը ստորագրող անդամք ճիշդ է թէ իր իրաւասութիւնը Վսեմ. Պողոս Փաշայէն ստացած է եւ ոչ թէ ժողովուրդէն, զի Վ. Փաշան ինքն է որ երկու օժանդակ անդամ առած է ժողովին մէջ»: Եթէ Տ. Մկրտիչեանի այս մեկնութիւնը ընդունինք, պէտք է անհրաժեշտաբար ընդունինք նաև թէ՛ արդի Թաղական Խորհուրդի Վսեմ. Փոխ-Ատենապետ Պէյը (Թաղ. Խորհուրդ) ըսելով ինք իր անձը կը հասկընայ, ճիշդ ինչպէս Լուդովիկոս Ժ2 կը բացազանչէր «L'Etat c'est moi!» կամ ինչպէս որ տաճիկները ճեղչեթ ըսելով Սուլթանը կը հասկընան: Սակայն անշուշտ բռնապետական կամ համիտական (անիրաշակաւ բառը շատ պակաս պիտի գար) այս հասկացողութիւնը որը ենթադրել կուտայ մեզի Թաղ. Խորհուրդին պաշտօնեայ փաստաբանը, մենք բնաւ չ'պիտի պատշաճեցնէինք Խորհուրդի մը որուն «ինչպէս իր կազմութեամբը նոյնպէս իր ոգիովը սահմանադրական» ըլլալը կը հաւաստէ մեզի միևնոյն փաստաբանը. . . :

Գալով սա խօսքին՝ «Վսեմ. Փաշան ինքն է որ երկու օժանդակ անգամ ԱՌԱԾ է ժողովին մէջ» այս զէտը կը հակասէ իր առաջին յօդուածին հետ որուն մէջ մեզի կըսէր թէ Փաշան երկու հրաժարողներուն տեղ ԿԱՌԱՋԱՐԿԷ Վսեմ. Բէիզեան Պէյերը: Կը տեսնէք որ առաջին յօդուածին մէջ բոլորովին սահմանադրական ու օրինական գոյն տուած է գործին՝ Վսեմ. Փաշայի կատարած գերը սահմանափակելով պարզ ատենապետի մը իրաւասութեանց անձուկ շրջանակին մէջ. իսկ ջախջախիչ sof իմասնիկ երևումէն յետոյ ստիպուել է նահանջ մը ընել, ջանալով որ այդ նահանջը աննշմա-

րելի անցնի, ուստի Սահմանագրու-
թեան տրամագրութեանց անտեղեակ
ձևանալով կամ գէթ անտեղեակները
խաբելու դիտումով կաւելցնէ. — «Ն.
Վսեմութիւնը իբրև ժողովրդի կողմէ
միաձայնութեամբ ընտրած Ասեմա-
պետ մը, ամեն իրաւունք ունէր փոք-
րամասնութեան տեղ օժանդակ ան-
դամներ առնել իր ուզած անձերէն»:
Մենք կը պատասխանենք. Տ. Մկրտիչ-
եանի հետ ենթագրելով պահ մը որ
նախորդ թագ. Խորհուրդը շոճուած
չէր, այլ միայն երկու անդամները
հրաժարած էին — ինչ որ բոլորովին
հակառակ է իրականութեան — այդ
պարագային Ն. Վսեմութիւնը չէր որ
իրաւունք ունէր փոքրամասնութեան
տեղ օժանդակ անդամներ առնելու իր
ուզած անձերէն, այլ թագ. Խորհուրդը
իր ձայներու բացարձակ մեծամասնու-
թեամբ հաղիւ ունէր այդ իրաւասու-
թիւնը, պայմանաւ որ իրմէ բարձր
մարմնէ մը վաւերացնէր իր կողմէ կա-
տարած այդ ընտրութիւնը: Դարձեալ,
Վսեմ. Փաշան «ժողովրդին կողմէ միա-
ձայնութեամբ ընտրուած ատենապետ
մը» չէր, ինչպէս կըսէ Տ. Մկրտիչեան,
այլ ժողովրդին կողմէ ընտրուած պարզ
անդամ մը՝ այն ալ նախորդ թագա-
կան Խորհուրդին: Ժողովուրդը Ատենա-
պետ կամ Ատենադպիր չընտրեր, այլ
թագ. Խորհուրդի անդամներ, որոնք
վերջէն իրենց մէջ կընեն պաշտօնա-
բաշխութիւնը — կը կազմեն Դիւանը:
Օրէնքի այս ամենատարրական կէտը
չի կրնար վրիպած ըլլալ ուշագրու-
թենէն Տ. Մկրտիչեանի որ ինքզինք
օրէնքի այնչափ նախաձգիչները կը
ներկայացնէ, և «օրէնսգէտ» անձնա-
ւորութիւններէ շրջապատուած ըլլալու
չնախարհիկ առաւելութիւնն ալ կը
վայելէ. Արով կընանք ըսել թէ
տգիտութենէ առաջ եկած սխալ մը չէ
այս եւ ոչ ալ պատահական անուշա-
գրութեան արդիւնք է, վասն զի Տ.

Մկրտիչեան նոյն ուղղութեամբ կը շա-
րունակէ այսպէս.

«Նմանապէս Ն. Վսեմութիւնը իբ-
րև Ասեմապետ կրնայ իր կողմէն ա-
մեն իրաւասութիւն սալ թագ. Խորհ-
դին՝ զօրաւոր ձեռքով մը վարելու ազ-
գին գործերը: Զօրաւոր կա՛ն թոյլ ձեռ-
քով կառավարելը (օրինակ՝ եկեղեցին
սօսիկան բերելը և որ ըստ կարգին)
Սահմանագրութեան հետ առնչութիւն
չունի. ՎԱՐՉԱՊԵՏԸ մէկ կա՛ն միւս կեր-
պով վարուելու (զիկապատուութիւն ը-
նելու կամ ոչ) եւ հրահանգ սալու Ա-
ՄԵՆ ԻՐԱՒՈՒՆԻՔ ՈՒՆԻ, ԱՌԱՆՑ ԱՅՍ
ԿԵՐՊՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ Ո՛Չ ՏՍ-
ՈՒՆ Ո՛Չ ԱԼ ՈՐԻՆ ԴԷՄ ՄԵՂԱՆՉԱԾ
ԸԼԼԱԼՈՒ»:

Իսկ ես կը հարցնեմ ուշիմ ընթեր-
ցողներուն. Տ. Մկրտիչեանի այս հոչա-
կաւոր տողերը վերէն ի վար հայհոյու-
թիւն չե՞ն Սահմանագրութեան թէ՛ սա-
ռիկ եւ թէ՛ ոգիիկ դէմ: Ատենապետն
է որ ամեն իրաւասութիւն և հրահանգ
կուտայ Խորհուրդին, թէ Խորհուրդը՝
Ատենապետին: Խորհուրդը, որ ժողո-
վուրդէն կընտրուի, ստորագրեա՞լ է
Ատենապետին՝ որը ինք կընտրէ և որը
ինք ազատ է ուզած վայրկեանին դի-
ւանի անդամակցութենէ դադարեցնել,
առանց ոչ ոքի հարցնելու: Աս ի՞նչ
խեղճ ու կրակ թաղական Խորհուրդ է
— պատասխանատուութիւնը Տ. Մկր-
տիչեանի վրայ — որ իր ամեն իրաւա-
սութիւնները կընդունի իր Մշտապէս
բացակայ (ա՛յս է արդեօք մշտական
բառին իմաստը) Ատենապետին ու-
րուն par dessus le marché ՎԱՐՉԱՊԵՏ ա-
նունն ալ կուտայ Տ. Մկրտիչեան: Այս
կերպով Տիւայ Մկրտիչեան «միաձայն
կուրակայ» թագ. Խորհուրդ միւս պատ-
մարժակ անդամներուն «իւնկութիւնը,
արժանապատուութիւնը եւ մտաւոր ու
բարոյական բոլոր կարողութիւնները»:
Ու մտածե՛լ թէ այսպէս ներկայաց-
ուող թաղական Խորհուրդ մ'է որ մի-

Լնոյն ժամանակ եօթներորդ երկինքը
կը հանուի անոր ինքնակոչ պաշտպա-
նէն. . . .

Տ. Մկրտիչեա՛ ի վերոյիշեալ տո-
ղբը կարգացողը կըստիպուի մտածել
թէ արդեօք Աղեքսանդրիոյ Թաղական
Խորհուրդը Եւրոպական Պետութեանց
Նախարարական Ժողովներուն նման
դահլիճ մ'է որը Նախարարապետը ինք
կը կազմէ կամ ի հարկին կամբողջացնէ
իր ուզած անձերէն, և այս կամ այն
կերպով վարուելու հրահանգները կու-
տայ անոր: Այսպիսի դրութիւն մը,
օրինակ, Գերմանիոյ Սահմանադրու-
թեան համաձայն կրնայ ըլլալ. բայց
Տ. Մկրտիչեան կարծեմ լաւ պէտք է
գիտնայ թէ հայ Ժողովուրդը կը կա-
ռավարուի ո՛չ թէ գերմանական կամ...
ճարտնական սահմանադրութեամբ, այլ
Ազգայի՛ն Սահմանադրութեամբ որը,
ի լրումն հեղուցութեան, վերջերս մաս-
նաւոր խնամով ի լոյս ընծայուած է
Թաղ. Խորհրդոյ պաշտօնաթերթ «Ար-
շալոյս»ի տպարանէն՝ կարծես նոյն
Թաղ. Խորհրդին հակասահմանադրա-
կան կազմութեան և անոր քարտուղա-
րին Ազգային օրէնքին դէմ հայհոյու-
թիւններուն իբր ապացոյց ծառայելու
համար: Հա՞րկ է ըսել. մենք եւրո-
պական ըմբռնումով վարչապետ չու-
նինք, այլ կա՛մ ուղղակի Ժողովրդէն
ընտրուած մարմիններ, ինչպէս Երես-
փոխանական Ժողով, Թաղ. Խորհուրդ
են, կամ այդպիսի ազգընտիր մար-
միններէ բղխած երկրորդական մար-
միններ, օրինակ, Հոգաբարձութիւններ,
խնամակալութիւններ ևն: Մեր բոլոր
մարմինները համարատու են իրենցմէ
բարձր մարմիններուն: Մեր վարչական
մեքենային նախագահն իսկ՝ Պատրի-
արքը՝ որ Ազգային Երեսփոխանական
Ժողովէն կընտրուի՝ նոյն Ժողովին առ-
ջն համարատու և պատասխանատու է.
գաւառներու մէջ առաջնորդական պաշ-
տօններն ալ նոյնպիսի պայմանաւո-

րումներ ունին, գաւառական կազմա-
կերպութիւնը մանրանկարն է կեդրո-
նական կազմակերպութեան, որուն և
համարատու է. վարչապետ չունինք,
Մշակակ Աստեղապետ չունինք, Միւ-
թեմի չունինք, գէթ այն իմաստով
որ այս վերջին բառը կը գործածուի
այստեղ: Վարչութիւն մը իրմէ առջի
կամ վերջի վարչութիւններու հետ
չչփոթելու համար միայն՝ երբեմն զայն
կը կոչենք Ատենապետին անունովը,
օրինակ Նորեանի վարչութիւն, Տաս-
եանի վարչութիւն ևն: Եթէ այսօր
Տաճկաստանի մէջ՝ ուր բռնապետա-
կան կարգերը կը տիրապետեն և ուր
հալածուած ենք՝ իրերու այս բնա-
կան և օրինական կերպը քիչ շատ
վտանգուած կրնայ համարուիլ, այդ
բանը բնաւ պատճառ մը չէ՛ որ ար-
գիլէ մեզի Եգիպտոսի պէս ազատ երկրի
մը մէջ մեր Ազգային Սահմանադրու-
թեան տառին և ոգիին համաձայն
վարչական դրութիւն մը ունենալու
փափաքիլ և ի հարկին պահանջել:
Բռնապետական երկրի մը մէջ կամա-
յականութիւններու և ապօրինութիւն-
ներու գլուխ ծռել և համակերպիլը
այնքան ամօթալի չէ որքան ազատ
երկրի մը մէջ հանդուրժել որ մեր
Սահմանադրական օրէնքին տեղ կա-
մայականութիւնը բարձր ի գլուխ թա-
գաւորէ, այն ալ օրինաւորութեան
կեղծուպատիր երեւութիւն տակ զոր
կը նկրտի անոր ընծայել սուտակաս-
պաս պաշտօնեայ մը. . . :

Ինչպէս վերը ըսինք, մեր մէջ ո և է
վարչութեան մ'Ատենապետը նոյն վար-
չութեան կընտրուի. ինքը չէ՛ որ միահե-
ծան կը վարէ ազգային գործերը, այլ
վարչութեան հետ խորհրդակցութեամբ
և մեծամասնութեան որոշմամբ. իսկ իր
ուզած կերպով գործերը վարելու, իր
ուզած անձերը պաշտօնի կոչելու, իր
պաշտօնակիցները իր ստորակարգեալ-
ները նկատելու, անոնց հրահանգներ

տալու, իր կողմէն ամէն իրաւասու-
թիւն (carte blanche) տալու լիազօր ի-
րաւունք ունեցողը, եթէ երբեք կայ
այստեղ այդպիսի հեղինակութիւն մը,
և Տ. Մկրտիչեան կը հաւաստէ թէ կայ,
ոչ թէ Թաղական Խորհրդի պարզ Ատե-
նապետ մ'է այն, այլ Սահմանադրա-
կան կարգերէ դուրս իշխանութիւն մը,
այսինքն կամ դիկտատոր մը, բռնա-
ւոր մը և կամ բարձրագոյն հրամանաւ
կարգուած լիազօր վարիչ մը — Մշտա-
կան Աստեղապետ մը, Միլիթարիստ մը:
Պողոս փաշան Պատ. Թաղ. Խորհրդին
հանդէպ այդպիսի միահեծան դիրքի
մը մէջ ներկայացնելովը, Տ. Մկրտիչ-
եան յայտնապէս կը հակասէ իր յօդ-
ուածին այն մասին դէմ ուր, ինչպէս
տեսանք, կրկին և կրկին մեզ կապա-
հովցնէր թէ՛ Աղեփասեղրիոյ հայ հա-
ւարակութեան մշտական Աստեղապետ-
ութեան պաշտօնը տիրոջ մ'է պարզա-
պէս և թէ՛ Վսեմ. Փաշան մերժած է
իբր մշտական Աստեղապետ պաշտօնի վրայ
մնալ և յայտարարած է թէ ինքն ալ
իրեր ազգին մէկ պարզ անդամն է՝ ուզէ
պաշտօնէ քաշուիլ եւ ուրիշներու հա-
ւասար ընտրուի եւ ընտրուի իրարմեկ-
ներով բարակաւանալ: Այս խոշոր
հակասութիւնն ալ ինչպէս բացատրենք.
ըստ իս, սա մէկ կերպով միայն կրնայ
բացատրուիլ այս: Վսեմ. Փաշան կը
շարունակէ ինքզինք Աղե. քսանդրիոյ
հայ հասարակութեան մշտական Աստե-
ղապետ և կամ Միլիթարիստ նկատել.
արդի Թաղ. Խորհուրդը կընդունի թէ
Ն. Վսեմութիւնը այդպիսի վերին իշ-
խանութիւն մը ունի, ինչպէս որ տե-
սանք և սօփիանակն ալ վկայ է. Սրբ.
Առաջնորդն ալ, ինչպէս տեսանք,
Ն. Վսեմութիւնը Միլիթարիստ կը ճանչ-
նայ, Երկրպետական կառավարութենէն
ալ վաւերացուած: Բայց որովհետեւ
թէ՛ Վսեմ. Փաշան, թէ՛ Թաղ. Խոր-
հուրդը և թէ՛ Սրբ. Առաջնորդը չեն
համարձակիր բացէ ի բաց խոստովանիլ

Ազգ. Սահմանադրութեան տրամադրու-
թեան գլխովին հակառակ այս կացու-
թիւնը, քանի որ մէկ անգամ Սահ-
մանադրութիւնը՝ թէ իսկ անուանապէս՝
ընդունուած է իբրև Երկրպետի Հայերը
կառավարող միակ օրէնքը, Տ. Մկրտիչ-
եան խիզախօրէն մէջտեղ նետուած է
ուրանալու «մշտական Ատեղապետ»ի
իրական գոյութիւնը, ամէն բան սահ-
մանադրական օրինաց կատարելապէս
համաձայն ներկայացնելու, այս նպա-
տակին հասնելու համար նոյն իսկ օրէն-
քին ամենատարչական տրամադրու-
թիւններն ալ խեղաթիւրելով:

Իսկ եթէ ասոր հակառակ ենթա-
դրութիւնը ընենք, եթէ, կըսեմ, հա-
ւատանք թէ «Մշտական Ատեղապետ»ի
իրական իշխանութիւն կամ յաւակ-
նութիւն ունեցող մէկը չկայ, այդ
պարագային Տ. Մկրտիչեան ինքն է
որ՝ իր վերոգրեալ տողերով Վսեմ.
Փաշային այդպիսի անսահման իրաւա-
սութիւններ տալովը՝ Ն. Վսեմութիւնը
օրինասէր ժողովրդին աչքին առջև
վարկարեկ կընէ՝ զայն ներկայացնելով
իբր «Վսեմաշուք բռնաւոր» և «Ամի-
րայիկ». բաւեր՝ որոնք «Փիւնիկ»ի մէջ
գործածուած տեսնելով՝ «անուանար-
կիչ և իրապէս նախատական» կը գտնէր
Ն. Վսեմութեան դէմ: Ընթերցողները
գուցէ սույն բերան վարանին ընդունիլ
այս եզրակացութիւնս Տ. Մկրտիչեանի
նկատմամբ. բայց ինչ պիտի ըսեն,
արդեօք պիտի չափշի՞ն անոնք՝ երբ
իրենց իմացնեմ թէ այսօր իր խիղճը
անհանգիստ ընող ու շղերը գրգռող
այդ «նախատական» բացատրութիւն-
ները իրապէս գործածած է ժամանա-
կին ինքը Տ. Մկրտիչեան ալ, երբ տա-
կալին ազատ գաղափարներ և սկզբունք-
ներ դաւանիլը իր շահերուն հակառակ
չէր նկատեր: Լսեցէք ուրեմն թէ ինչ
գրած է Տ. Մկրտիչեան «Չիչուի» ի
խնդրոյն առթիւ յօդուածի մը մէջ որ
հրատարակուած է Աղե. քսանդրիոյ

«Réforme» ի 1899 Սեպտ. 30ի և «Journal du Caire» ի Հոկտեմբեր 3ի համարներուն մէջ և որուն թարգմանութիւնը տեսնուած է «Արշալոյս» ի թիւ 20 և նոյն տարւոյ Հոկտ. 25ի համարին մէջ, որմէ կ'արտատպենք:


Արդէն այս Սահմանադրութիւնը Օսմ. կայսրութեան օրէնքին մաս կը կազմէ. 1860ին Սուլթան Ապտուլ-Ազիզէ հաստատուեցաւ ժողովորդը ազատեցող համաշխարհայիններէն ԱՄԻՐԱՅ կոչուած կարգ մը ՀԱՅ ԲՈՆԱՒՈՐՆԵՐՈՒ, ՈՐՈՆՅ ԲԵԿՈՐՆԵՐԸ ԴԵՌՓԱՒՈՆՆԵՐՈՒ ԵՐԿՐԻՆ ՄԷՉ ԿԸ ՏԵՍՆՈՒԻՆ:

Տ. Մկրտիչեանին իրեն կը թողում պարզել թէ Փարաոններու երկրին մէջ որո՞նք են այդ աւիրայի բեկորները:

(Շարունակելի)

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

ԼՈՒՍՆԵԱԿ



Յօդէ՛ շողերդ, անուշ շունկուտի երկիւնքին. կը սիրեմ քեզ, միշտ պաշտումով կը դիտեմ. Սակայն ինչո՞ւ, մեղանադոն, քաղծաղիւ կ'երեւիս ինձ, դո՞ւ ալ բշուռս մ'ես մի՛թէ:

Ինչո՞ւ, շունկուտի, շունկուտի անուշ երկիւնքին, Տրտում ես միշտ, դո՞ւ որ բոյր ես գիշերուայ,

Անեն արեւ կը գուրգուրան քու վերայ. Դո՞ւ որ օսար ես միշտ աղօսքս մեր կեանքին:

Դու որ ունիս գիրկը կապոյտ երկիւնքին Այն երկիւնքին՝ ուր լոկ հանգիստ ու հանոյ՛թ Յուսան գտնե՛ր դժբաղքս մարդիկն հեզ, խեղճուկ.

Ուր հոգիներ ցաւէ յոգնած՝ կը յառին.

Ի՞նչ, մի՛թէ հո՞ն ալ կայ ցաւ, կոծ, սառապակի

Որ տրտում է դեմքդ քաղձոն, դաշխահար.

Ի՞նչ, մի՛թէ հո՞ն ալ կայ պատմութիւն մեզ համար. Ըսէ՛, շունկուտի, շունկուտի անուշ երկիւնքին:

Լո՛ւռ ես, աւա՛ղ, անուշ շունկուտի երկիւնքին.

Կը սիրեմ քեզ, միշտ պաշտումով կը դիտեմ. Սակայն ինչո՞ւ մեղանադոն, քաղծաղիւ կ'երեւիս ինձ, դո՞ւ ալ բշուռս մ'ես մի՛թէ:

* * *

Արդեօք տեսա՞ր հայրենիքս, արեւն դաշտ, Դիերն անթիւ, նետուած հոս, հոն, յիրուցան.

Մայրեր հայրեր, բոյրեր, ջրայք որ կուշան. Լըսեցի՞ր դուն ողբերն անոնց բարեպաշտ:

Տեսա՞ր զկուած կոյսեր, հրեշտակի հողածիւն Շուշանի պէս անթիւ, սիրոյ ծաղիկներ Որ չը ճանչցած գգուանք, ժրպիտ, հարկոյր, սիր, Կեղոն կրֆեր ճանչցան, մահուան տեսչացին:

Տեսա՞ր արդեօք հեզ մանկիկներ նորածին, Որ անգիտակ, մայրիկներն տեղ՝ անկեղան Սառած ու ցուրտ դիակներու փարեցան. Բաղբը կարի տեղ՝ արի՛ւնը ծրծեցին...:

Ըսէ՛, շունկուտի, շունկուտի անուշ երկիւնքին.

Մի՛թէ վերեւ տեսա՞ր Հայուն սառապակի. Ու ցաւելով, շողերդ իբրեւ ըսիտփակի Յողես անոնց, մեղանադոն, ցառագին.

Կ'օրհնեմ ըզքեզ, բարի, քաղցրի՛կ շունկուտի,

Ա՛յնքան նրբան ես դու արիս, ցաւով շի. Ըսիտփեղու տեսչիկն ա՛ն ալ կը հայի.


Այ, վա՛խ չ'ունի գեթ քու շողերդ հոգեմուտ.

Յօդէ՛ շողերդ. շունկուտի անուշ երկիւնքին, Հո՛ն ուր արիւն արցունք կուշան Հայեր միշտ, Յօդէ՛ արծաթ շողեր արեւի հարնավիշտ.

Դուք մեղմես անոնց ցաւե՛րն անագին...:

* * *

ԵՐԲԷՔ ՊԻՏԻ ՉՍՊԱՆՆԷՔ



Երբեք պիտի չ'սպանենեք

Ելից. Գլ. Ի. 13

Աշակերտը վարժապետին աւելի չե՛. բայց անեն աշակերտ կասարեալ է, երբ իր վարժապետին կը նմանի.

Ղուկ. Գլ. 2. 40

Վասն զի բոլոր սուր առնողները սուրով պիտի կորնչին.

Մատթ. Գլ. Ի2. 52

Ըրեք մարդոց բոլոր ինչ որ կուզեք քի աւնոնք ընեն ձեզի. զի հո՛ն է օրհնին ու մարգարէները:

Մատթ. Գլ. Ժ2. 12

Ա.

Երբ թագաւորները կ'սպաննուին դատավճռով մը, ինչպէս Շարլ Ա. Լուի Ժ2. Մեքսիկայի Մաքսիմիլիանոսը. կամ արքունիքի յեղափոխութեան մը մէջ, ինչպէս Պետրոս Գ. Պօղոս, և այլ և այլ Սուլթաններ, Շահեր, Բօգդիխաններ, ընդհանրապէս արդարութեան կը թողուն իր գործը, կը նշանակուի դէպքը, պատմութիւնը զայն կ'արձանագրէ ու ժողովուրդները կը մոռնան. բայց երբ կ'սպաննուին թագաւորները, իշխանները, վեհապետներ, առանց դատաստանի, առանց արքունիքի յեղափոխութեան, ինչպէս Հենրիկ Գ. Ա. զեքսանդր Բ. Աւստրիոյ կայսրուհին, Նասր-է-տ-Տին Շահը, Գարնօ նախագահը, վերջերս ալ Ումպէրթօ թագաւորը, այսպէս գործուած մարդասպանութիւնը՝ թագաւորներուն, կայսրներուն ու անոնց պարուրակին բարկութիւնը, բոլոր պարկեշտ հոգիներուն սրտմտութիւնը կը յարուցանէ, իբր թէ նոյն իսկ վեհապետներն երբէք մասնա կցած չ'ըլլային մարդասպանութեանց, իբր թէ անոնք երբէք օգտուած չ'ըլլային ասոնցմէ և ո՛չ ալ հրաման տուած:

Արդ, ճիշդ հակառակը տեղի կ'ունենայ: Թագակիր զոհերուն մէջէն լաւագոյնները, ինչպէս Ալեքսանդր Բ. և Ումպէրթօ, յանցապարտ եղան ու մեղսակից սպանման հազարաւոր մարդոց, որ ինկան պատերազմի դաշտերուն մէջ: Գալով նուազ բարի թագաւորաց կամ կայսերաց, հարիւրաւոր հազար, հազարաւորներով իսկ հաշուել կրնանք զոհերը պատերազմներուն, որոնց անոնք եղան հեղինակները:

Քրիստոնէական վարդապետութիւնը ջնջեց ռակն ընդ ահաւն, ասանկ ընդ ասանակն օրէնքը: Եւ սակայն այս վեհապետները, որ միշտ խստիւ պահած են այս օրէնքը եւ շարունակ ահուելի համեմատութեանց մէջ գործադրել տուած են զայն, թոյլ տալով որ դատապարտելից տրուած տանջանքները մնան ու մնան, ու նորոգելով պատերազմները, ո՛չ միայն ակն ընդ ական կը փոխարինեն, այլ պաղ պաղ կը հրամայեն ջարդը հազարաւոր զօրքերու, զրկելով զանոնք պատերազմի, այսինքն դէպ'ի մահ:

Թագաւորներն ու կայսրները, եթէ բանաւոր ըլլային, աւելի պէտք էր որ զարմանային այս ոճիրներու հաշուադիպութեան վրայ, երբ անընդհատօրէն օրինակը տուողներն իրենք են:

Ու չ'մոռնանք որ մարդիկ դիւրաւ կ'իբրնոսանան (hypnotiser): Երբ ամեն օր կը տեսնեն իրենց աչքին առջև անցած դարձածը, անոր նշանակութիւնը չ'են ըմբռներ: Կը տեսնեն թագաւորաց, կայսերաց ու հանրապետական նախագահներուն գուրգուրանքը բանակին վրայ, կը տեսնեն հանդէսները, ցոյցերը, մարզանքները, որոնցմով վեհապետները կը պարծեհան փոխադաբձաբար, ու փութկոտութեամբ կը վազեն այս զինուորական ցոյցերուն, անհամբեր՝ հաստատելու թէ ինչպէս իրենց եղբայրները, տեսքոտ, թիթղուկով ժապաւինեալ հա-

գուտներով ինքնաշարժներ կը դառնան, քայլ փոխելով շեփորներու ու թմբուկներու ձայնով, սպայի մը կամ յիսնապետի մը հրամանատարութեամբ, ամենքն ալ ընելով նոյն շարժումը ու չ'են հասկնար թէ ասի ի՛նչ ըսել կ'ուզէ:

Եւ սակայն շատ պարզ է ասի ու շատ յստակ. բոլոր այս հանդերձանքը, ըստ ինքեան, աչկերտութիւնն է մարդասպանութեան, բուժումն ու մարզումն անոնց, զորս, թէ իսկ ուզեն կամ չ'ուզեն, ոճրին գործիները կ'ընեն իրենք:

Ու թագաւորները, կայսրները, նախագահներն են որ այս ամենը կը կազմակերպեն, զայն կը վարեն ու անով կը հպարտանան: Մարդասպանութիւնն իրենց մասնաւոր զբաղում, պաշտօն բրած են, շատերն անոր որոշիչ շքանշանները կը հագնին, զէնքերը կը կրեն ու կը մոլեգնին երբ իրենցմէ մէկը կ'սպաննեն:


Բ.

Թագաւորներուն սպաննութիւնները, օրինակի համար Ումպէթօյիւրը, զարհուրելի արարքներ են: Եւ սակայն թագաւորաց ու կայսերաց հրամանով գործուած ոճիրները — ո՛չ միայն անցեալին մէջ. Ս. Պարթէլըմիի գիշերը, կրօնային ջարդեր, ահռելի վրիժառութիւնն էր՝ վտարանջող գեղացիներուն դէմ ի գործ դրուած. Վերսայլի ջարդեր — այլ և ներդային մէջ. կառավարութիւններուն կողմէն արտօնեալ մահու պատիժներ, գլխատուած, կախուած, խեղդուած, հրացանի բռնուած դատապարտեալներ, իցարգել բանտերուն, պատժակ ան հորոններու մէջ մեռնող, պատերազմի դաշտերուն մէջ ջարդուած թշուառներ, — առանց բազդատութեան—խիստ աւելի սոսկալի և նողկալի են քան թէ անիշխանականաց նախճիրները:

Թագաւորաց սպանումներն ահռելի են մանաւանդ, որովհետեւ անոնց հեղինակները խելագարած են:

Երբ արքայասպանները կը գործեն ազգեցութեանը տակ իրենց տիեզերական սրտմտութեան, ծնունդ տառապանքներուն ժողովրդին զոր իրենք գերինը կը նկատեն, և որոնց աղէտները կը վերագրեն Աղեքսանդրի, Գառնոյի, Ումպէթօյի. երբ անիշխանականները կը հնազանդին անհատական վրիժառութեան մը զգացումին և իրենք գիրենք կը համարին մարդկութեան արդարութեանը գործադիրները, իրենց արարքները սակայն որ կ'ընդվզեցնեն տիեզերական բարոյականը, հասկնալի են. բայց ի՛նչպէս կըլլայ որ Պրէսչին ի Մօնձա զրկող ու հիմայ ուրիշ վեհապետներու սպառնացող անիշխանականներէն կազմակերպուած ընկերակցութիւնը չ'կրնար, մարդկութեան ճակատագիրը բարելաւելու համար, հնարել երբէք բան մը որ աւելի լաւագոյն ըլլար սպաննումէն այդ վեհապետներուն ոչոնց մահը չ'պիտի կրնար ըլլալ այնքան օգտակար, ո՛չ ալ արդիւնաւոր որքան Հէրակլէսի համար չէ՛ր ըլլար գլուխ մը կտրելը Հիտրային, որմէ ուրիշ մ'ալ կը ծնէր: Վասն զի թագաւորները, կայսրները, երկար առեն կայ որ կարգադրած են բան մը նման այն բանին որ տեղի կ'ունենայ կատարելագործուած հրացաններուն մէջ. հէ՛նց ոչ գնտակ մը դուրս կ'ենէ, վայրկենապէս ուրիշ մը կը դուրս անոր տեղը: Թագաւորը մեռա՛ւ. Ապրի՛ թագաւորը...:

(Շարունակելի)



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկաճներու. դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիւնէյ առ Ընդհանուր Գործակալ և Լիսգոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մենշիե Ապուսարսա փողոց թիւ 10

ԴԵՂԱՐԱՆ

ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր գեղորայք, սրէսխաղիթներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ գեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԻՆՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Բաղաքիս երևելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 Ֆրանկ

գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վաշագոյր, ևն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿՍԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին աւաւելութիւններն են. ծովեղերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պուլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Դիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատըր փողոցին մէջ, Դաղարեան Եղբարց Վաճառատան դիմաց. գնացէ՛ք, ճաշաիեցէ՛ք եւ տեսէ՛ք: